ՍՈՒՐԵՆ ՇՏԻԿՅԱՆ-ՎԱՆԵՑԻ

ԴԱՏԱՊԱՐՏՎԱԾԻ ՕՐԱԳԻՐԸ

[ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ]

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՍՈՒՐԵՆ ՇՏԻԿՅԱՆ-ՎԱՆԵՑԻ

ԴԱՏԱՊԱՐՏՎԱԾԻ ՕՐԱԳԻՐԸ

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2016

ՀՏԴ 821.19-94 Շտիկյան-Վանեցի
ԳՄԴ 84(5Հ)-4
Շ 917

ՍՈՒՐԵՆ ՇՏԻԿՅԱՆ-ՎԱՆԵՑԻ
Շ 917 **Դատապարտվածի օրագիրը**/Սուրեն Շտիկյան-Վանեցի:
-Եր., ԵՊՀ հրատ., 2016, 52 էջ:

ՀՏԴ 821.19-94 Շտիկյան-Վանեցի
ԳՄԴ 84(5Հ)-4

ISBN 978-5-8084-2098-4

© ԵՊՀ հրատ., 2016

© Սուրեն Շտիկյան-Վանեցի, 2016

Բազմաշնորհ գրականագետ էր Սուրենը, Հայաստանի Գիտությունների ակադեմիայի գրականության ինստիտուտի ավագ գիտաշխատող, ՀԽՍՀ պետական մրցանակի դափնեկիր: Նա հեղինակել էր երկու տասնյակից ավելի մենագրություն և շուրջ 300 գիտական հոդված: Հատկապես մեծ արձագանք էին գտել Ղևոնդ Ալիշանի ստեղծագործական ժառանգությանը, նրա հայրենասիրական պոեզիային նվիրված Շտիկյանի բարձրարժեք աշխատությունները: Սուրենը կազմել էր «Հայ նոր գրականության ժամանակագրություն (1801-1875 թթ.)» մեծարժեք եռահատոր աշխատությունը, Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի կյանքի և գործունեության ժամանակագրությունը և նրա աշխատությունների մատենագրությունը, հեղինակել էր շատ այլ գրվածքներ:

Նա լի էր հումորով, երեխայի պես կենսուրախ և պարզամիտ էր: Կյանքի վերջին տարիները համընկան Հայաստանի անկախության ցուրտ ու մութ տարիներին: Սուրենը, որ ընտանիքի միակ տղամարդն էր, ստիպված էր բոլորի պես հոգալ իր ընտանիքի հոգսերը: Մեր ձեռքի տակ են այդ անտանելի օրերի Սուրենի կատարած գրառումները՝ «Դատապարտվածի օրագիրը» վերնագրով: Նա թղթին էր հանձնել իր դառը մտորումները 90-ականներին ստեղծված անտանելի վիճակի մասին, որոնք հատվածաբար հանձնում ենք ընթերցողի ուշադրությանը: Օրագիրը ցույց է տալիս, թե այդ դժվար տարիներին որքան անօգնական էր հայ մտավորականը: Այն հնարավոր չէ կարդալ առանց տխրության ու ցավի:

...Սուրենի սիրտը չդիմացավ ցուրտ ու մութ տարիների արհավիրքին: 1996 թվականին նա հրաժեշտ տվեց կյանքին: Նա փայլուն մտավորական էր՝ բառիս իսկական իմաստով, իմ ջերմագին բարեկամն ու ընկերը:

Հրաչիկ Սիմոնյան
«Ինչպես եղել է ...»
Երևան, 2016, էջ 216 (կրճատումներով)

ԴԱՏԱՊԱՐՏՎԱԾԻ ՕՐԱԳԻՐԸ

«Ողբամ զքեզ, Հայոց աշխարհ...»
Մ. Խորենացի
«Ողբի հայրենիք, որբի հայրենիք...»
Հ. Թումանյան
«Ողբա՜մ, ողբամ զքեզ ես Հայաստան,
Երբեմն ի բյուր փառաց տեղիք, այժմ դամբան»
Ղ. Ալիշան
«Մ՛խ, շատը կուլ տամ ու քիչը ասեմ,
Ողորմած Աստված, ես քեզ ի՞նչ ասեմ...»

Նոյեմբերի 15, երկուշաբթի, 1993 թ.
Տան ջերմաստիճանը՝ 14°

Արթնացել եմ ժ. 9-ին, եթե կարելի է այսպես ասել, ողբերգականորեն-հանգիստ վիճակում: Այսպիսի վիճակում երևի լինում է այն հիվանդը, որը գիտե, որ միևնույն է, իրեն փրկություն չկա, կամ պատժի առավելագույն չափին դատապարտված այն հանցագործը, որը հաստատ գիտե, որ ինչ էլ անի-չանի՝ իր նկատմամբ պատիժը միևնույն է, իրագործելու են: Լույս չկա, ջուր չկա, իսկ դա նշանակում է, որ առավոտյան նախաճաշը կլինի պանիր-հաց, կամ կարագ-հաց, կամ նման սառը մի բան և առանց թեյի: Ճիշտ է, իմ անզուգական Տաթևիկը հավատացնում է, որ մի բան «կստեղծագործի», բայց ի՞նչ կարող է անել նա, երբ միայն չոր սպիրտ ունենք:

Այսօր մենք պետք է վառարան դնենք: Չգիտեմ, իմ օրագիրը կարդացող որևէ եվրոպացի, ասենք՝ ֆրանսիացի, իտալացի կամ գերմանացի կհասկանա՞, թե ինչ բան է վառարան դնելը, բայց ես պետք է ասեմ, որ, օրինակ, մեր տանը վառարան դնում էինք 1943-45-ական թվականներին, և հետո նույնիսկ մոռացանք այդ մասին: Իսկ հիմա 1993 թվականն է: Այսինքն՝ այսօր, 1993 թվականին, մենք շպրտվել ենք մինչև 1943-45-ի մակարդակը: Փա՜ռք անկախությանն ու անկախ Հայաստանին:

Երեկ հատվածաբար լողացել եմ: Այս էլ չի հասկանալու որևէ՝ քիչ թե շատ քաղաքակիրթ երկրի քաղաքացի, ուստի՝ բացատրեմ: Որովհետև տաք ջուրը պրոբլեմ է, ապա մի անգամ «լողանում ենք» մինչև գոտկատեղ, կռանալով լոգարանի վրա, իսկ հաջորդ օրը, կամ հաջորդ անգամ՝ «լողանում ենք»՝ լվանալով գոտկատեղից ցած գտնվող մասերը: Ցնցուղով լողանալու մասին արդեն մոռացել ենք: Սա էլ է անկախության բարիքներից մեկը: Ահագին էլ գործ ունեմ անելու և, որ հետաքրքիր է, նույնիսկ այս «դրախտային» պայմաններում աշխատանքս չեմ դադարեցնում: Գոնե գրել-ջնջելով մոռանում ես այս զզվելի իրականությունը:

Ժամը 4-ին թոռնիկիս՝ Հասմիկին, վերցրեցի մանկապարտեզից և զգացի, որ ամբողջ մարմնով դողում է: Սկսեց ինքը. «Պապի մանկապալտեզում ցուլտ-ցուլտ է: Ամբողջությամբ դլդլալով դողում եմ»: Ի՞նչ անեմ, Հասմիկ ջան, միակ ջան, թանկագին ու կյանքիս կտոր ջան: Քեզ պահենք տա՞նը: Բայց տանն էլ նույն ցուրտն է, և տանն էլ «դլդլալով դողալու ես», էլ չասած այն մասին, որ քեզ նայող չի լինելու: Գոնե մանկապարտեզում երեխաների հետ, երևի, ավելի լավ է, ո՞վ գիտե:

Իսկ մյուս կողմից էլ՝ եթե մրսում-դողում է, և այն էլ «դռդը-ռալով», իսկ եթե մրսի, իսկ եթե հիվանդանա-պառկի, իսկ եթե Տերը մի արասցե...

Վերջին տողի տառերը ինչ-որ ծուռումուռ եղան, այնպես չէ՞: Որովհետև ձեռքս դողաց այս զարհուրելի մտքից...

Նոյեմբերի 16, երեքշաբթի, 1993 թ.
Տան ջերմաստիճանը՝ 13,5°

Երանի առավոտյան կողքիս լինի մի կինոնկարահանող, որպեսզի անմահացնի այն մի քանի րոպեները, երբ անկողնուց ելնում է Սուրեն Շտիկյանը:

Արարողությունն սկսվում է, նախ նրանով, որ հանում եմ «անկողնային» գուլպաներս, որովհետև ես քնում եմ գուլպաներ հագած, քանզի ցուրտ է, և հագնում եմ իմ «դրսի», այսինքն՝ քիչ ավելի տաք գուլպաները: Հետո հագնում եմ վերնաշապիկս, հետո տնային շալվարս: Վերնաշապկի վրայից հագնում եմ «իշլիկս» (սա թուրքերեն բառ է, որ գործածում էր տատիկս), դրա վրայից էլ՝ էլի անթև ջեմպր, դրա վրայից՝ արդեն թևավոր բրդյա սվիտեր, վրայից՝ իմ տնային կոստյումը, գլխիս եմ դնում Տաթևիկիս գործած բրդե կանաչ գլխարկը, որը ավելի շուտ կվայելի կրկեսի ծաղրածուներին...

Նոյեմբերի 18, հինգշաբթի, 1993 թ.
Տան ջերմաստիճանը՝ 12,8°

Միայն փաստեր.

... Գրեցի մեր տան ջերմաստիճանը՝ 12,8 և... և ներքին մեծ ուրախություն եմ ապրում: Ռադիոյով հաղորդեցին, որ Երևանի Նորքի զանգվածում տներ ու շենքեր կան, որտեղ բնակարանում լինում է ... 3° ջերմություն: Դուք պատկերացնու՞մ եք, ե-ր-ե-ք աստիճան: Ի՞նչ են անում նրանց ընտանիքները, նրանց կանայք, երեխաները: Երեխանե՜րը...

●

... Հիվանդանոց տեղափոխվեց մեր ընտանիքի մտերիմներից մեկը՝ Ազատուհի Ավետիսովնան, կամ, ինչպես մենք ենք նրան կոչում՝ Ազան: Ստամոքսի ինչ-որ ցավեր ուներ, այդ ցավերը շատացան, սրվեցին, բարդացան և նա «հանգրվանեց» հիվանդանոցում: Բժիշկը քննել էր հիվանդին, բարեխղճորեն նշանակել բոլոր դեղամիջոցները և դրանց բավականին երկար ցուցակը տվել էր ... ամուսնուն՝ Սուրեն Գուլիևիչին: Ինչո՞ւ: Որովհետև հիվանդանոցը ոչ մի դեղ չունի իր հիվանդներին բուժելու համար, և դեղերը պետք է ճարեն իրենք՝ հիվանդները: Հակառակ դեպքում հիվանդը համապատասխան բուժում չի ստանա: Խեղճ Սուրեն Գուլիևիչը գրեթե լալով եկավ մեր տուն. «Մելան ջան, հոգի ջան, ես այս դեղերը ախր որտեղի՞ց ճարեմ»: Մելանը բացատրեց, որ դեղերը պետք է գնի մասնավոր անձանցից, որոնք այն վաճառում են զարհուրելի գներով, որովհետև դեղատներում այդ դեղերի ութսուն տոկոսը, եթե ոչ

ավելին՝ չկա: «Գիտե՞մ, գիտե՞մ,- լալահառաչ պատասխանեց Սուրեն Գուլիևիչը,- բայց այդ մասնավորներից դեղերն առնելու դեպքում ես երեք ամիս պետք է սոված-ծարավ նստեմ: Ասա՛, ի՞նչ անեմ...»

Ի՞նչ կարող էր անել Մելանը, քան այն, ինչ արեց. անհուսորեն տարածեց ձեռքերը:

Համապատասխան մեկնաբանությունների կարիք կա՞...

•

... Երեկ գնացի նավթ գնելու: Մեկ լիտր նավթ, որն արժի 7000 ռուբլի, իսկ որպեսզի ավելի պարզ լինի՝ ասեմ, որ իմ աշխատավարձը 30.000 ռուբլի է: Նավթ լցնելու արարողության պահին ներս մտավ ըստ ամենայնի սովորական մի տղա և ձեռքի երկու տարաները գետնին դնելով, տիրաբար հրահանգեց. «Քառասուն լիտր, ապերո»: Մինչ «ապերոն» զբաղված էր նրա հրաման-կարգադրությունը կատարելով, վերջինս ձեռքը տարավ գրպանը և ...

Եվ այն ինչ հանեց գրպանից, ստիպեց ինձ ցնցվել տեղումս: Մի կույտ տասը հազարանոցներ հանեց գրպանից, երևի մի 5-6 հարյուր հատ տասը հազարանոց: Անփութորեն սկսեց հաշվել՝ «ապերոյին» վճարելու համար, մինչ ես հապշտապ դուրս թռա կրպակից:

Հողը գլխիդ, գիտությունների թեկնածու, Պետական մըրցանակի դափնեկիր, Ակադեմիայի ավագ գիտաշխատող, 290 անուն հոդվածի և տասնհինգ անուն գրքերի հեղինակ Սուրեն Շտիկյան: Մի լիտր նավթ, այն էլ կոպեկ-կոպեկ հաշվելով դու

հազիվ ես առնում քո ընտանիքը մի կերպ պահելու համար, իսկ քո կողքին մարդիկ ահա թե ինչպես են ապրում: Սա հենց չի՞ նշանակում, որ գոնե այսօրվա համար անպետք ու անարժեք է քո մասնագիտությունը և, ուրեմն, ինչ որ դու անում ես, իզուր է ու անտեղի:

Հողը գլխիդ, Սուրեն Շտիկյան...

•

... Քրոջս՝ Սեդայի թոռան մանկապարտեզում որոշել են ձմեռվա ցրտի պատճառով առաջիկայում աշխատանքները դադարեցնելու մասին կարգադրությանը հակառակ, շարունակել մանկապարտեզի աշխատանքները: Դրա համար վառարաններ են դրել յուրաքանչյուր սենյակում և ... և հանձնարարել են մանկապարտեզի փոքրիկներին, որ յուրաքանչյուրը տնից մեկական կտոր փայտ բերի, վառարանում վառելու համար:

Ես ավելի ցավալի և, եթե կարելի է այսպես ասել, ողբերգականորեն-ծիծաղելի տեսարան չէի կարող պատկերացնել: Գնում էր մի փոքրիկ, թևի տակ փայտի մի կտոր, կողքին մյուսը, որ գերանի մի կտոր դրել էր ուսին, ապա երրորդը, որը գետնի վրա քարշ էր տալիս պարանով կապած փայտը, այնտեղ մեկն էլ երկու ձեռքով գրկել էր մի տախտակ, որը փաթաթած էր թղթով, որովհետև տախտակը մազութոտ էր, տմբուզ թշերով մի տղա էլ մանրահատակի 5-6 հատ փայտ էր տանում, «քաջարի» մի տղա էլ ուզում էր մի աղջկա ձեռքից խլել նրա փայտերը, որովհետև իրենը քիչ էր...

Համապատասխան մեկնաբանությունների կարիք այստեղ էլ չկա, այնպես չէ՞...

●

... Սեդայենց հիմնարկի աշխատակիցներից մեկի կինը տղա է ունեցել և ծննդկանին արդեն տուն են բերել: Աշխարհի բոլոր նորածինների նման սա էլ անընդհատ թրջում ու կեղտոտում է իր տակաշորերը: Նորածնի մայրիկը, ինչպես և հասկանալի է, անհապաղ լվանում է փոքրիկի տակաշորերը, իսկ քանի որ լույս չկա, որ կարողանա այդ շորերը չորացնել, իսկ փոքրիկին դրանք անհրաժեշտ են, ապա հայրիկ-մայրիկը ելքը գտել են: Նրանք... իրենց մերկ մարմնի վրա են փաթաթում այդ խոնավ տակաշորերը և այդպես «զարդարված» պառկում են անկողնու մեջ, գեթ այդպիսի զարհուրելի գնով փոքրիկի այդ տակաշորերը չորացնել կարողանալու համար...

●

Ռադիոյով ելույթ ունեցավ Երևանի քաղաքապետը: Պատմեց, որ ամեն ինչ անում են ժողովրդի սոցիալ-տնտեսական վիճակը բարելավելու համար, հավելեց, որ իրեն և կառավարությանը հայտնի է մայրաքաղաքի ժողովրդի ծանր վիճակը:

– Ինձ մոտ հյուր էր եկել Կիևի քաղաքագլուխը,- վերջում հավելեց նա,- վերջինս ման էր եկել Երևանում, իր աչքով տեսել ու քննել էր ամեն ինչ ու վերջում, գիտե՞ք, ինչ ասաց ինձ,- քաղաքագլուխը չգիտեմ ինչու ծիծաղեց,- այս պայմաններում, ասաց, որի մեջ բնակվում է Երևանի ազգաբնակչությունը, Կիև

քաղաքի ազգաբնակչությունը մեկ ժամ էլ չէր դիմանա:

Մեր քաղաքապետը, չգիտեմ ինչու, էլի ծիծաղեց...

●

Այն, ինչ որ գրելու եմ ստորև, պատմել է իմ այն ծանոթներից մեկը, որի ասածին չհավատալ չեմ կարող: Նա պատմում էր, որ մահացել էր իր հարևանը, մտավորական ընտանիքի հայր, մասնագիտությամբ՝ ինժեներ-քիմիկոս, որի երեխաներից մեկը մանկավարժ էր, մյուսը՝ տնտեսագետ, կինը ժամանակին եղել է համալսարանի դասախոս, այժմ՝ թոշակառու: Հանգուցյալի հարազատները ոչ միայն փող չեն ունեցել իրենց հարազատի թաղումը կազմակերպելու համար, այլև չեն կարողացել անգամ մի հասարակ դագաղ գնել: Հարցը լուծել են հետևյալ կերպ. հանգուցյալին փաթաթել են սպիտակ սավանի մեջ և հանձնել հողին: Կեսգիշերով, որովհետև ցերեկով մարդիկ կարող էին տեսնել...

●

– Դուք ի՞նչ եք անում երեկոյան, ընկեր Զրբաշյան,- անցյալ օրը հարցրեցի մեր ինստիտուտի տնօրենին,- ժամը 6-ից հետո արդեն մութն ընկնում է, ոչ գրել, ոչ կարդալ չի լինում, որևէ այլ գործ անելն էլ անհնար է: Ես, օրինակ, հենց այնպես նստումմնում եմ, կամ վեճ-աղմուկ եմ անում մերոնց հետ: Դո՞ւք ինչ եք անում երեկոյան:

Զրբաշյանը կողքանց նայեց ինձ:

– Ինչ եմ անո՞ւմ: Ապուշանում եմ:

Նոյեմբերի 22, երկուշաբթի, 1993 թ.
Տան ջերմաստիճանը՝ 13°

Մի քանի օր առաջ հեռուստատեսությամբ ելույթ ունեցավ Լևոն Տեր-Պետրոսյանը, որպեսզի գեթ մի կերպ պատասխան տա, թե ինչու է խելագար թափով աճում թանկությունը, թե նոր հայկական դրամը երկրային ու աստվածային ինչ բարիքներ է բերելու մեր ժողովրդին, թե...

Իսկ ես լսում էի, ու չէի լսում...

Սույն այրին ճանաչում եմ դեռ 1960-ական թվականներից, երբ որպես կրտսեր գիտաշխատող աշխատում էր մեր ինստիտուտում...

Նոյեմբերի 24, չորեքշաբթի, 1993 թ.
Տան ջերմաստիճանը՝ 12,5°

Այս ջերմաստիճանը ինձ և՛ անհանգստացնում է, և՛ հանգըստացնում: Որ ցուրտ է՝ ճիշտ է, բայց եթե կարողանանք ամբողջ ձմեռվա ընթացքում պահպանել գոնե այսքանը, ամեն ինչ հրաշալի կլինի: Անցյալ տարի, օրինակ, մեր տան սառնությունը հասավ մինչև 8°, և սա այն դեպքում, երբ նախորդ տարիներին տան ջերմաստիճանը ձմռանը 18-19 աստիճանից պակաս չէր լինում:

Գոնե առայժմ, շատ հանգիստ ու խաղաղ եմ տանում ամեն ինչ: Երբ հիշում եմ անցյալ տարին, երբ առավոտյան քնից արթ-

նանում էի գրգռված ու կատաղած վիճակում, երբ առիթ էի ման գալիս, որ «կռիվ-կռվշտոց անեի» (աղջկաս բառն է) ցանկացածի հետ, երբ տեղի-անտեղի կռվում էի իմ ընտանիքի անդամների հետ (ինչքա՜ն եմ կոշտ ու կոպիտ խոսքեր ասել Մելանյային ու Տաթևիկին), չեմ կարողանում գոհունակությամբ չարձանագրել այն փաստը, որ հիմա, կարծես, ամեն ինչ ավելի լավ է: Գոնե հիմա տեսնենք, թե ինչ կլինի առաջիկա երեք ամիսների ընթացքում:

Գնացի Մատենադարան Վազգեն Կաթողիկոսի «Տարեգրության» վրա աշխատելու, թեև այդ գործը ով է հրատարակելու, չգիտեմ, իսկ ավելի շատ հանդիպելու Աիդային՝ շենշող ու եվրոպացի Աիդային:

Նրան հանդիպում եմ «հոգին գալարելու» համար.

– Աի՛դ, Աի՛դ, դու այնպիսի երկիր տեսել ես, չէ՞, որտեղ հացի խանութում հաց վաճառվի և ոչ մի հերթ չլինի:

Ժպտում է տխուր, մելամաղձոտ:

– Աի՛դ, իսկ այնպիսի երկիր կա՞, որտեղ տներում գիշեր-ցերեկ լույս լինի: Այսինքն, օրվա որ ժամին անջատիչը պտտես, սենյակի լույսը վառվի...

Նոյեմբերի 26, ուրբաթ, 1993 թ.
Տան ջերմաստիճանը՝ 12°

Հապճեպ գրառումներ.

ա) Դուք գիտե՞ք, թե ինչի համար է... կոշիկը:

Կարող եմ հավատացնել, որ չգիտեք, ավելի ճիշտ՝ չգիտեք, որ կոշիկը, մանավանդ, արտասահմանյանը, հրաշալի ... վառվում է:

«Գյուտն» արել էր քույրս՝ Սեդան: Իրենց տանը եղած հին կոշիկներից մեկ-երկու հատը գցել էր վառարանի մեջ՝ վառելու համար: Ուրախացած զանգեց մեզ. «Սուրիկ ձեր վառարանի մեջ կոշիկ վառեք, կոշի՛կ, հրաշալի վառվում է, ոչ մի հոտ կամ ծուխ չի արձակում»: «Գյուտը» կրկնեց Տաթևիկը, թեև ես ահագին փնթփնթացի: «Հիմա ռետինի հոտը կլցվի տունը, արդեն մեզ այդ էր պակաս...»: Վառվեց հրաշալի, ոչ մի տեսակ հոտ էլ չլցվեց տանը և տունն էլ տաքացավ:

Այնպես որ, եթե տնային վառարանում դուք վառելու համար փայտ ու թուղթ քիչ ունեք, ինչպես, օրինակ, մենք, ապա խորհուրդ եմ տալիս կոշիկ վառել, մանավանդ արտասահմանյանը: Հիանալի վառվում է:

բ) Ես Սուրեն Շտիկյանն եմ, բանասիրական գիտությունների թեկնածու, հանրապետության Պետական մրցանակի դափնեկիր, Գիտությունների ակադեմիայի գրականության ինստիտուտի ավագ գիտաշխատող... Ես ունեմ մի պատկառազդու պայուսակ, որը դատարկ է և միշտ ձեռքիս է: Որտեղ մտնում եմ, եթե տեսնում եմ, օրինակ, առանց հսկողության մնացած գիրք,

կամ թղթերի կապոց, կամ «անտեր» դրված ինչ-որ թղթեր, անհապաղ գաղտագողի խցկում եմ պայուսակս՝ տուն բերելու համար: Մեր տանը եղած վառելիքը այնքան է, որ եթե կարգին վառենք, մի ամիս հազիվ բավականացնի և գոնե այս «գեղարվեստական» ձևով կկարողանանք մի քիչ թուղթ ունենալ տանը՝ վառելու համար:

գ) Արդեն զզվեցնում է փողերի փոխանակման շուրջ բարձրացված այս գոռում-գոչյունը: Գները աճում են բառացիորեն օր-օրի վրա, ազգը կործանվում է աչքերիս առաջ, Հայաստանից փախչողների թիվը հասնում է շուրջ միլիոնի, իսկ սրանք փող են փոխում:

Ինչքա՞ն է լուրջ այս «գործընթացը»:

Այս փող փոխելն էլ ազգային զզվելի մի գիծ ի հայտ բերեց, և ոչ միայն ինձ, այլև շատերի համար՝ փող չունեցող խաղալը:

Նոյեմբերի 28, կիրակի, 1993 թ.
Տան ջերմաստիճանը՝ 12,5°

Ձյուն է գալիս: Լի ու բոլ, առատ ու «հարուստ» ձյուն: Գոնե այս ձյունը քիչ լիներ, որ մարդիկ շունչ առնեին, իսկ Աստված որոշել է իսկական «հարուստի ձմեռ» անել: Ի՞նչ անի հայ ժողովուրդը, երբ նրան ոչ ոք չի սիրում՝ սկսած իր Աստծուց, որին նա արդեն քսան դար պաշտում է: Միտքս պի՞ղծ է: Ի՞նչ անեմ, երբ այսպիսի դառն ու անողոք է իրականությունը: Այս ձյուն-ձմեռն էլ կարծես դիտմամբ է անում Աստված, որ ամեն ինչ մինչև վերջ

կատարյալ լինի: Դաժան փորձությունների է ենթարկում մեզ՝ մեր Աստվածը:

Երեկ գնացի հացի և մեկ ու կես ժամ հերթ կանգնելուց հետո, առա մեզ հասանելիք մի քանի կտոր հացը: Իսկ որովհետև հղփացած ու լկտի լակոտների մի խումբ, առանց հերթ ու կարգ հարցնելու, փորձեցին խցկվել առաջ, բարձրացրեցի ձայնս, հետո ձեռքս, հետո բռունցքով խփեցի մի լակոտի: Հետո եկա տուն, սրտի նոպա ունեցա: Մինչև հիմա էլ նստվածք է մնացել հոգուս վրա:

Ախր 63 տարեկան լավ-վատ հայտնի մարդ ես, հացի խանութում էլ քեզ ճանաչողները քիչ չէին, էլ բռնցքակռիվ անելը ո՞րն է, Սուրեն Շտիկյան:

Բայց երբ ձվից նոր դուրս եկած մի լածիրակ, որին դու քեզ մոտ որպես քարտուղար անգամ չես պահի, թքած ունենալով քեզ վրա ու հերթում կանգնած քեզ նմանների վրա, արհամարհական-ծաղրական պատասխաններ տալով, հերթ չկանգնելով խցկվում է առաջ, և դու էլ, քո հերթին, դաստիարակվել ես թերությունների դեմ պայքարելու, ապօրինություններ ու անարդարություններ տեսնելու դեպքում անպայման միջամտելու ոճով ու ոգով, էլ ուրիշ ի՞նչ էր մնում անել, քան այն, ինչ արեցիր, Սուրեն Շտիկյան…

Չգիտեմ, թող ընթերցողը որոշի...

Նոյեմբերի 30, երեքշաբթի, 1993 թ.
Տան ջերմաստիճանը՝ 12°

Մանկապարտեզում տեղեկացրեցին, որ «այսօր իրենց վերջին օրն է», որ մանկապարտեզը փակվում է մինչև գարուն, որովհետև իրենց մոտ ցուրտ է: Սենյակներ են եղել, որտեղ ջերմաստիճանը հասել է մինչև 2°:

Սա նշանակում է, որ իմ թոռնիկ Հասմիկը մինչև գարուն պիտի մնա տանը, որն էլ նշանակում է, որ մինչև գարուն, գոնե, տանտիկինը ես եմ:

Չհասկացա՞ք՝ բացատրեմ:

Կինս՝ Մելանյա Նիկսալյանը, բժշկուհի է, աշխատում է Չորրորդ բուժմիավորման հիվանդանոցում և նա ճիշտ ժամանակին պետք է աշխատանքի վայրում լինի: Ուշանալը կամ գործի չգնալը բացառվում է:

Աղջիկս՝ Տաթևիկ Շտիկյանը, հայոց լեզվի դասախոս է Բժշկական ինստիտուտում, ունի դասացուցակով որոշված ու հաստատված դասաժամեր և, ուրեմն, նա էլ չի կարող աշխատանքից ուշանալ, առավել ևս՝ չգնալ:

Ես՝ Սուրեն Շտիկյանս, աշխատում եմ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում և իմ աշխատանքային ժամանակը հաստատուն և կայուն չէ: Այստեղից էլ ասելիքս մակաբերեցիք: Կանայք վեր են կենում առավոտյան, հապճեպորեն գնում են աշխատանքի և փոքրիկին թողնում են իմ խնամքին, այսինքն՝ ես դառնում եմ տանտիկին:

Բայց սա դեռ բոլորը չէ: Աշխատանքի գնացողների համա-

պատասխան «տանտիկնոջ» հրահանգավորումները թափվում են ասես առատության եղջյուրից:

– Հայրիկ ջան, Հասմիկի նախաճաշը դրել եմ նավթավառի վրա: Որ տաքանա, երեխային տուր, թող ուտի:

– Սուրիկ ջան, հոգիս, հիմա որտեղ որ է ջուրը կգա: Չմոռանաս դույլերը լցնել:

– Հայրիկ ջան, մի կերպ այնպես արա, որ ցերեկվա ընթացքում Հասմիկին գոնե մի կես ժամ դուրս բերես զբոսանքի: Լավ կլինի՝ սահնակով: Թե չէ ամբողջ օրը տանը փակված կմնա...

Դրությունը ամբողջացնում են մեծ աղջկաս՝ Նարինեի գիշերային այցելությունները իմ 7 տարեկան թոռնիկ՝ Սոնայի հետ: Նարինեն պատրաստվում է երեխա ունենալ: Նրանց տանը վառարան չկա, իսկ ջերմատու սարքերն էլ աշխատում են լույսի ռեժիմին համապատասխան: Տնային նորմալ ջերմաստիճանի մասին խոսելն ավելորդ է, խոսքը վերաբերում է փոքր երեխայի և հղի կնոջ առօրյա սննդին: Մթերքի պակասի և գների աճի հետևանքով ստիպված են լինում շատ բան տնտեսել, իսկ եթե սրան էլ ավելացնեք տանը որևէ բան պատրաստելու անհնարինությունը՝ վիճակը հասկանալի կդառնա: Կնոջս՝ Մելանյայի խորհրդով, Նարինեն՝ իմ թոռնիկ Սոնայի հետ հաճախակի հանգրվանում էր մեր տանը՝ փոքր-ինչ տաքանալու և ինչ-որ բան ուտելու:

Եվ այսպես, էլի ու էլի...

Եվ ես Հասմիկիս հեքիաթ եմ պատմում «Կարմիր գլխարկի» մասին, այդ արանքում պատասխանում եմ հեռախոսազանգերին, ընթացքում օգնում եմ մեր հարևանուհի Ջուլյային՝

վառարանի փայտը կոտրել, նաև՝ սեղան եմ գցում, որովհետև Հասմիկիս հետ ես էլ պետք է ինչ-որ բան ուտեմ, ընթացքում սկսում եմ լսել արդեն գալ սկսող ջրի ձայնը և գլխապատառ նետվում եմ խոհանոց՝ ջուր հավաքելու: Միաժամանակ հասցը-նում եմ հիշել, որ տեղի է ունենալու Լեսսինգին նվիրված երե-կո, որտեղ ելույթ պետք է ունենամ նաև ես և, ուրեմն, պետք է նախապատրաստվեմ դրա համար: Այս ամենի ընթացքում... գրում եմ ուսումնասիրությունս Ամենայն Հայոց Տ.Տ. Վազգեն Ա-ի մասին, այդ ընթացքում...

Դուք կարողանո՞ւմ եք հասկանալ իմ վիճակը...

Դեկտեմբերի 4, ուրբաթ, 1993 թ.
Տան ջերմաստիճանը՝ 10,5°

Երեկ մեր ինստիտուտի աշխատակից Լուսիկ Կարապե-տյանը բանասիրական գիտությունների դոկտորի աստիճան պաշտպանեց:

... Դահլիճում նստած՝ նայում էի ավագ ու կրտսեր գործըն-կերներիս հյուծված, սմքած և, թող ներվի ասել, ներքնապես քայքայված դեմքերին: Նայում էի կարեկցանքով ու հոգեկան անթաքույց խղճահարությամբ: Շարքի սկզբում փոխտնօրեն Արամ Գրիգորյանն է, որ ցրտից սառած ձեռքերը շփում է իրար ու երկու ձեռքերը՝ երեսին, քանզի դեմքն էլ է սառել: Կողքին Արմենուհի Սրապյանն է՝ 80-ական թվականների հրաշք-գեղեց-կուհին, այժմ նիհարած, այտոսկրերն ու ծնոտի ոսկորը դուրս

ցցված, իր թառամած ձեռքերով վերարկուն է ուղղում: Գուրգեն Հովնանին, որի հետ աշխատել եմ շուրջ քառասուն տարի, քիչ է մնում չճանաչեմ: Նիհարել ու սմքել է այնպես, որ ասես քամել են: Վաչե Նալբանդյանը դեռ աշխատում է պահպանել նախկին պահվածքը, բայց ցավագնորեն նիհարած, տառապած դեմքը դա չի ասում: Ապա Խաժակ Գյուլնազարյանն է, համով-հոտով, ասող-խոսող ու սրամիտ Խաժակը, որից պարզապես ոչինչ չի մնացել, և, ինչպես դառնորեն սրամտում է ինքը, «Ես նիհարում եմ այնպես, որ շուտով կպրծնեմ»: Քիչ ավել կամ քիչ պակաս, այդպես են նաև մյուսները՝ Գևորգ Հայիրյանը, Ռուզան Նանումյանը, Սերգեյ Սարինյանը, Ազատ Եղիազարյանը...

Նայում էի մեր մտավոր դասի այս ընտրյալների՝ գութ հայցող ու ցավ սփռող կերպարանքներին ու ինձ անընդհատ թվում էր, որ սրանք այն աշխարհի ամենահավանական թեկնածուներն են, որոնք այսօր-վաղը, ահա այսպես շարք բռնած, պիտի ճանապարհ ընկնեն «ի վերին Երուսաղեմ»: Ուղեղումս անընդհատ պտտվում էր նույն հարցը.

– Տեր Աստված, սրանցից քանի՞սը կդիմանա մինչև գարուն...

Հետաքրքիր է, ի՞նչ էին մտածում նրանք, երբ նայում էին ինձ...

•

Վա՜յ, օրը մթնում է և ես նոր հիշեցի, որ այսօր չեմ լվացվել: Ավելի ճիշտ լվացել եմ միայն ձեռքերս, իսկ երեսս՝ ոչ: Ցուրտ է...

Դեկտեմբերի 6, երկուշաբթի, 1993 թ.
Տան ջերմաստիճանը՝ 9,5°

Դառը կատակներ.

Հավաքվել էինք քրոջս՝ Սեդայենց տանը,- ի դեպ, սա միակ ձևն է մեր ընկերական խմբի համար քիչ - շատ ազատվելու կյանքի այս կոշմարից,- և զարմանքով բացահայտեցինք մի հետաքրքիր օրինաչափություն: Փեսաս՝ Հովհաննեսը, մեզ էր նայում ու խոսում դեմքը կիսով չափ դեպի մի կողմ դարձրած: Ձանասիրաբար աշխատում էր այնպես անել, որ դեմքի մյուս կեսը չտեսնեինք: Քիչ-քիչ կարողացանք պարզել եղելությունը: Պարզվեց, որ երբ տվել են լույսը, վերցրել է իր էլեկտրական սափրիչը, շտապել է հայելու մոտ սափրվելու: Վերջացրել է դեմքի մի կեսը և ... լույսը անջատել են: Հետևանքն այն է եղել, որ մյուս կիսադեմը մնացել է չսափրված: Դրա համար էլ, ահա, բոլորիս «պրոֆիլ» էր նայում...

•

Փողոցում հանդիպեցի Արամուհի Բեժանյանին՝ կծկված ու սեղմված, սմքած ու չորացած, ցրտից կարմրած-կանաչած-կապտած մեր Արամուհուն:

– Ինչպես ես, Արամուհի,- սկսեցի ես:

Ասես առիթի էր սպասում, որ խոսեր.

– Երեկվանից հաց չեմ առել, լույս էլ չկա, որ կարողանամ գոնե տաք թեյ խմեմ: Տանս ջերմաստիճանը ցերեկը երեք աստիճան էր, հազիվ-հազ լողացա:

Իրարից բաժանվելուց հետո միայն սթափվեցի: Սա երեք աստիճանի պայմաններում լողացե՞լ է...

•

Մատենադարանում, ընդմիջման ժամին հավաքվել ու «դարդ-դարդի» էինք տալիս: Ի թիվս այլոց, տրտնջացի ես էլ, որ աշխատանքային ոչ մի պայման չկա նաև տանը, որովհետև մեր տան ջերմաստիճանը հազիվ տասն աստիճան է և դրա համար էլ...

Չթողեցին, որ միտքս ավարտեմ:

– Սուրիկ, մեզ ձեռ ես առնո՞ւմ,- ընդհատեց ինձ Վահե Բարթիկյանը,- մեր տան ջերմությունը երկու աստիճան է, ու դու դեռ բողոքո՞ւմ ես:

– Իմ մահճակալը դրված է պատի տակ,- սկսեց Նոնան,- և երբ առավոտյան ես արթնանում եմ, պատի վրա իմ շնչառության հետևանքով սառցի շերտ է գոյացած լինում: Ես պատի վրայից առավոտյան սառույց եմ քերում Սուրիկ, հասկանո՞ւմ ես:

– Էստեղ են ասում, որ «կուշտը սովածին մանր կբրդի»,- դժգոհ փնթփնթաց Ռուզանը,- ես գիշերը տաք ջրով լի շշեր եմ դնում ոտքերիս տակ, որ մի քիչ տաքանամ, որովհետև ամբողջ գիշեր չեմ տաքանում: Դու քո տասն աստիճանից դեռ դժգոհո՞ւմ ես, Սուրիկ:

– Սիրելիդ իմ Սուրիկ,- սկսեց «սիրուն Մայան»,- մեր տան

համար նույնիսկ հատուկ ասացվածք ունենք. «Հագնվում ենք, որ քնենք, հանվում ենք, որ տնից դուրս գանք»: Որովհետև առանց լրացուցիչ շորեր հագնելու, գիշերը քնելն անկարելի է: Դու ի՞նչ ես ասում:

Եվ մշակեցին ու մշակեցին ինձ...

●

IV բուժմիավորման հիվանդանոցում, որտեղ, ինչպես արդեն ասել եմ, աշխատում է կինս՝ Մելանյան, մահացության դեպք էր տեղի ունեցել: Եվ չորրորդ հարկում մահացած հանգուցյալին երկու սանիտարուհիներ տեղափոխել էին վերելակ՝ առաջին հարկ իջեցնելու համար: Իրենք էլ տեղ էին գրավել վերելակում՝ մահացածի կողքին, սեղմել էին ներքև իջնելու համապատասխան կոճակը, վերելակը իջել էր մինչև ճանապարհի կեսը և...

Եվ հենց այդ ժամանակ լույսն անջատվել էր: Մինչև լսելի էին դարձել բուժակների օրհասական գոռոցներն ու ճիչերը, մինչև պարզել էին, թե որտեղ է էլեկտրիկը, ճշտել էին, որ սա իր աշխատանքն արդեն ավարտված համարելով տուն էր գնացել, մինչև գնացել ու տնից բերել էին նրան, մինչև բացել էին վերելակի դուռը, անցել էր ավելի քան երկու ժամ:

Երկու ժամ, երկու կին բուժակներ վերելակի փոքրիկ խցիկում, հանգուցյալի հետ կողք-կողքի...

•

Մահացավ մեր դիմացի շենքում ապրող Փայլակ պապիկը, որը, ի թիվս այլևայլ որդիների ու ժառանգների, ունի նաև մի շատ սրամիտ թոռնիկ, բավականին տարօրինակ՝ Օբերոն անունով: Իր պապիկի մահվան առիթով սա գնաց-եկավ, բողոք ու հարցապնդումներ արեց այլևայլ բարձրաստիճան հիմնարկներում, որ գոնե մեկ ամբողջ օր լույս տան, թաղման կարգը լավ-վատ կազմակերպելու համար: Լույսը բարեբախտաբար տվեցին և հանգուցյալ Փայլակ պապիկի շնորհիվ լույս ստացավ նաև մեր շենքը: Թաղումն ավարտելուց մի քանի օր անց Օբերոնը փողոցում կանգնեցրեց ինձ:

– Քեռի Սուրեն, իմ հանգուցյալ պապիկի շնորհիվ ձեր շենքը մի ամբողջ օր լույս ունեցավ, ճի՞շտ է:

– Շատ ճիշտ է, Օբերոն ջան:

– Բա հետո՞:

– Հետո ի՞նչ,- տարակուսեցի ես:

– Հետո էն, որ հայկական ժողովրդական լավ ասացվածք կա՝ «Մեղքը լալով, պարտքը՝ տալով»: Էնպես արեք, որ ձեր շենքի շնորհիվ մի անգամ էլ մենք լույս ունենանք:

– ...

Քիչ լռեց, ապա՝

– Քեռի Սուրեն, դուք մի մեռել պարտք եք մեզ: Այս մասին մտածեք:

•

Աշխարհիս բոլոր հիվանդանոցների նման, IV Բուժմիավորման հիվանդանոցն էլ պատրաստվել էր ժամը 15.00-ին ճաշ տալ իր հիվանդներին: Տալու էին հարիսա, հիարկե, առանց մսի: Եվ...հիվանդանոցի լույսը կտրել էին: Չկորցնելով իրեն՝ խոհարարը հերոսական որոշում էր կայացրել: Նա հարիսայով լի ութ վիթխարի պղինձները դուրս էր բերել հիվանդանոցի բակ, խնդրել-համոզել էր ոտքի վրա գտնվող հիվանդներին՝ աջ ու ձախից փայտ հավաքել, օջախ անել, բոլոր պղինձները դրել էր կրակի վրա և շարունակել էր եփել հարիսան...

– Մտա հիվանդանոցի բակ,- պատմում է Մելանյան,- ու ինչ, որ տեսա, չհավատացի: Մրի մեջ կորած-ծածկված պղինձների մի ամբողջ շարք, որոնց շուրջը գնում-գալիս են խոհարարն ու հիվանդները և հարիսա են խառնում: Բակում մի այնպիսի եռուզեռ էր, կարծես սոդոմ-գոմոր լիներ: Հիվանդներից մեկը գրկով փայտ էր բերում, երկրորդն աշխատում էր ծառից ճյուղեր պոկել, երրորդը, ինչ որ տեղից ճարած ճյուղերը բարդում էր իրար վրա, չորրորդը՝ օգնում էր խոհարարին, հիվանդների մի խումբ էլ, ոտքից-գլուխ մրոտ, պղինձների տակից վառված փայտի մոխիրներ էր հանում՝ հեռու տանելու-թափելու համար...

– Ահագին ժամանակ անցավ, մինչև կարողացա ինձ հավաքել,- խոսքն ավարտեց Մելանյան:

•

Հիվանդանոցի շենշող բժշկուհիներից մեկը՝ Սյուզաննան, ուներ մոսկվաբնակ մի հիվանդ, որը բուժվել, ապաքինվել էր Երևանում և, բնականաբար, պետք է վերադառնար Մոսկվա: Իսկ քանի որ ապաքինվածը պետք է վերադառնար գնացքով և ճանապարհը տևելու էր մի քանի օր, ապա հիվանդանոցի ղեկավարությունը որոշում է հիվանդի հետ Մոսկվա գործուղել նաև բժշկուհուն, պայմանավորվելով, որ գործուղման վարձը հիվանդը վճարի, քանզի հիվանդանոցը գործուղման փող չունի: Հիվանդը ստիպված՝ համաձայնվում է և Սյուզաննայի հետ ուղևորվում Մոսկվա: Բարեհաջող կերպով տեղ հասնելուց, հիվանդին տանը տեղավորելուց, համապատասխան դեղամիջոցներ նշանակելուց հետո, բժշկուհին դիմում է հիվանդին.

– Ձեզ մոտ ամեն ինչ կարգին է, ես արդեն կարող եմ վերադառնալ:

– Շնորհակալություն, բժշկուհի, հաջողություն Ձեզ:

– Այդպես չի գիտե՞ք, ... վերադարձի օդանավի տոմսի փողն էլ եք դուք վճարելու:

– Բայց կարծեմ Երևանում որոշվեց, որ միայն գործուղման վարձը...

– Հենց դա էլ կա, միայն գործուղման վարձը, այսինքն՝ իմ այստեղ գալու և վերադառնալու վարձը: Հակառակ դեպքում ես չեմ կարող վերադառնալ և, ուրեմն, անորոշ ժամանակով ստիպված պիտի լինեմ մնալ Մոսկվայում:

Եվ հիվանդը վճարում է բժշկուհու՝ նաև վերադարձի տոմսի գինը:

•

Համաձայն կառավարության որոշման, դպրոցներին պետք է վառարաններ տրվեն՝ դասարանները տաքացնելու և դասերը անցկացնելու համար: Երևանի № 3 դպրոցի տնօրինուհին շտապում է Կրթության նախարարություն, իր դպրոցի համար գոնե 25 վառարան ստանալու համար: Հաշվում է, որ այդ քանակով կկարողանա մի կերպ տաքացնել 30 դասասենյակ: Նախարարությունում կտրուկ մերժում են: Տնօրինուհին դատարանով սպառնալով՝ կարողանում է հասնել նրան, որ ամբողջ դպրոցի համար ձևակերպվում է 3 վառարան:

Դեկտեմբերի 10, ուրբաթ, 1993 թ.
Տան ջերմաստիճանը՝ 10°

Տասն աստիճանը առավոտյան է, և սա մի քիչ մխիթարում է ինձ: Օրվա ընթացքում կհասնի մինչև 11 և կարծես թե լավ կլինի:

Գրողների միության գրադարանից «թռցրեցի» «Հուշարար միություն» և Բեյրութի «Շիրակ» ամսագրերի 10-12 համարները: Թռցրեցի «վասն մեր վառարանի»:

...Ընդհանրապես ասած՝ գիր-գրականություն «վերցնելը» գոնե ինձ համար շատ էլ դժվար բան չէ: Այն միջավայրները, որտեղ ես լինում եմ, ինչքան ասես կա այդ ամենից: Կա հարցի բարոյա-գեղագիտական կողմը: Ընթերցասրահում նստած է Սուրեն Շտիկյանը, ակնոցով, փողկապով, վեհաշուք արտաքի-

նով մի այր, բավականին հայտնի գրականագետ-գիտնական, մտավորական: Դե, սիրելի բարեկամներ, մի՞թե կարելի է նրա վրա կասկածի գեթ նշույլ անգամ ունենալ...

...Դուք չկարմրեցի՞ք իմ փոխարեն: Ես գետինն եմ մտնում ամոթից, բայց պետք է ասեմ ու գրեմ միայն ճշմարտությունը, դառն ու անողոք ճշմարտությունը...

Դեկտեմբերի 13, երկուշաբթի, 1993 թ.
Տան ջերմաստիճանը՝ 11°

Սարսափելի կերպով մռայլ եմ ու անտրամադիր:

Դե ինչքան կարելի է հանդուրժել այս բոլորը: Տասնմեկ աստիճան սենյակային ցուրտը, որի պայմաններում ոչինչ չես կարող անել քո և ընտանիքիդ կիսաքաղց գոյությունը, հասարակագույն հիգիենայի պակասը ինչ-որ կերպ ապահովելու համար, որևէ տիպի հեռանկարի կատարյալ բացակայությունը, համազգային կործանման ու որպես «հայ ազգ» հասկացության մոտալուտ վերացման անլույս հեռանկարը, տնտեսության կատարյալ քայքայումն ու զարհուրելի սովի՝ ավելի ու ավելի որոշակի գծագրվող ուրվանկարը...

Ես մեկն ասացի, դուք հազարը պատկերացրեք:

Տաթևիկը գնացել է նավթի կտրոնները ստանալու: Գիտեք երևի, որ բարեգործական չգիտեմ որ կազմակերպության ջանքերով հայ ժողովրդի ավելի կարիքավոր հատվածին ձրի նավթ են տալիս՝ կտրոններով: Տաթևիկս, ահա, գնացել էր այդ կըտ-

ոոններն ստանալու և հերթ էր կանգնել... 9 ժամ: Այո, ինը ժամ, իմ քնքույշ ու նրբիրան Տաթևիկը, և ինը ժամ դրսում, այս ձյուն-ձմռանը: Ին-ն-նը ժաա՜մ:

Չկրկնե՞մ Պարույր Սևակի խոսքերը՝ «Դե եկ, տնավեր, մի խելագարվիր»:

Ավելի ու ավելի եմ հանգում սարսափելի, բայց փրկարար գաղափարի՝ ինքնասպանություն գործել:

Հետաքրքիր է, որ այս հանճարեղորեն դաժան գաղափարը իմ մտքում ծնվել էր նաև անցյալ տարի: Բայց անցյալ տարի ես սրան հանգեցի փետրվար ամսվա սկզբին: Իսկ հիմա...

Ե՞րբ պետք է վերջանա այս կոշմարը...

Դեկտեմբերի 18, շաբաթ, 1993 թ.
Տան ջերմաստիճանը՝ 10°

Տասն աստիճանը մեր բնակարանում այն է, երբ խոսելիս բերանից գոլորշի է դուրս գալիս: Վառարանը դրել ու վառում ենք, բայց որովհետև վառելիքը քիչ է, աշխատում ենք խնայողաբար օգտագործել ամեն մի ծեղը, իմ թռցրած գրքի ամեն մի էջը: Գիրք թռցնելու հարցում արդեն մասնագիտացել եմ:

Արդեն երրորդ օրն է, որ Տաթևիկս գնում է ԲՇՏ, օգնության նավթը ստանալու համար և հերթ է կանգնում օրական... 10-12 ժամ: Կրկնում եմ՝ օրական 10-12 ժամ, և հերթը չի հասնում: Բարեբախտաբար չեմ տեսնում, թե ինչպես է տուն գալիս, որով-

հետև եթե ես այդ էլ տեսնեմ, երևի սրտի նոպա կստանամ: Եվ գիտեմ, թե ինչպես է հոգնում իմ եղնիկը, իմ Տաթևիկը: Արդեն չեմ խոսում այն մասին, որ նավթը ժողովրդին բաժանելիս յուրաքանչյուր 40 լիտրի մեջ 2-3 լիտր պակաս են տալիս: Սա գիտեն բոլորը, և սա նույնիսկ օրինաչափ է դարձել: Չեմ խոսում այն մասին, որ դեռ օդանավակայանում «լավ տղերքը» գործը դասավորել են այնպես, որ այդ նավթի մի մասը ուղարկվում է վերավաճառելու և, ուրեմն, դրա որոշ մասը ժողովրդի ձեռքը չի հասնում: Այդ մասին նույնիսկ պաշտոնապես հայտնեց ռադիոն:

Երեկ տանը, բառի իսկական իմաստով, հիստերիայի նոպա ունեցա: Այս անտանելի ցուրտը….. երբ ամեն ինչ սառն է, երբ անկողին մտնելը ամենասարսափելի բանն է աշխարհում, քանզի սառն է, երբ անկողնուց վեր կենալը ավելի սարսափելի է, քանզի շուրջդ ամեն ինչ սառն է, երբ տհաճորեն սառն են, օրինակ, քո ակնոցը, գրիչը, գրամեքենայի ստեղները, գրասեղանի ապակին, քո գուլպաները, դռան բռնակը, թեյի գդալի պոչը, քո երեսսրբիչը, որի պատճառով էլ վախենում ես երեսդ սրբել… Եվ երբ չես տեսնում այդ բոլորի վերջը, երբ ավելի ու ավելի ես հանգում այն մտքին, որ սա կործանման դատապարտված ազգի վերջին խելահեղ ջղաձգումներ են, և երբ դու էլ, ցավագնորեն զգայուն ու ջղաձիգ բնավորություն ունեցող մարդ ես…

Դե էլ ինչպե՞ս հիստերիա չանեի…

Դեկտեմբերի 24, ուրբաթ, 1993 թ.
Տան ջերմաստիճանը՝ 9°

Գրում եմ մեկ վառված մոմի լույսի տակ, դրա համար էլ աչքերս ցավում են:

Այսպես ուրեմն. «Մեծ հարգանքով՝ հմուտ ու հոգատար բժշկուհի Մելանյա Բարունակովնային և սիրելի Սուրեն Շտիկյանին, լավագույն ցանկություններով, հեղինակից»: Հեղինակը նշանավոր պատմաբան, գիտության վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Վարդան Պարսամյանն է, գիրքը՝ «Պատմագիտական աշխատություններ», հրատարակված Երևանում, 1985 թվականին:

«Սիրելի Սուրիկին, եռանդուն երիտասարդ բանասերին, նվիրում եմ՝ սիրով»: Նվիրողը՝ Ասատուր Ասատրյանն էր, ճանաչված ու հարգելի մի գրականագետ, իմ ավագ ընկերն ու բարեկամը: Գիրքը կոչվում էր «Սոցիալիստական վերածննդի հայ գրականության պատմությունից (ակնարկ)» և հրատարակվել է Երևանում, 1959 թ.:

Կամ ահա սա՝ «Արթուր Անդրանիկյանից պարոն Սուրեն Շտիկյանին, հրաշալի և ընտրագույն գիտնական-բանասերին, մեր մեջ իրեն ունենալու շնորհակալությամբ, սիրով»: Արթուրի բանաստեղծությունների «Այլընթաց» խորագիրը կրող ժողովածուն է սա, որը հրատարակվել է մեզ մոտ՝ Երևանում, բոլորովին վերջերս՝ 1993 թ.:

Այս ողբերգական թվարկումը ես կարող եմ շարունակել, և ամենաողբերգականն այն է, որ այս թվարկումը դեռ կշարու-

նակվի մինչև... մինչև ձմեռվա վերջ: Քանզի վերևում բերված-ները այն ամենն է սոսկ, ինչ մնացել է նրանցից, որովհետև բուն գրքերը արդեն օգտագործվել են «վասն վառարանի»: Ինչո՞ւ: Որովհետև ձմեռվա համար կուտակած մեր փայտը հազիվ-հազ կբավարարի մինչև գարուն, իսկ ավելի շուտ՝ չի բավարարի, և, ուրեմն, պետք է որպես փայտին օժանդակող միջոց իմ գրադարանի գրքերն էլ վառենք:

Իմ ընկերների, իմ հեռու-մոտիկ բարեկամների գրքերը...

Մակագրված ամեն մի գիրք հիշողություն է ինձ համար, ջերմ, քնքույշ, հուզումնառատ ու հուզումնաշատ մի հիշողություն: Կարող եմ զգայացույց դեպքեր պատմել, թե ինչքան հոգատար էր իմ նկատմամբ Ասատուր Ասատրյանը, կամ պրոֆեսոր Վարդան Պարսամյանն ինչեր արեց իմ «Ալիշանի» հրատարակությունն ապահովելու համար: Ինչքա՜ն հուզումնալից բաներ կպատմեմ ամենաներկայանալի մարդկանցից մեկի՝ անզուգական ու անկրկնելի Խաժակ Գյուլնազարյանի մասին...

Իսկ հիմա ես վառում եմ նրանց գրքերը: Այսինքն՝ այրում եմ այն չքնաղ հիշողությունները, որոնք իմ կյանքի իմաստն են կազմում, կազմում են իմ կյանքի բովանդակությունը: Այսինքն՝ ես կորցնում եմ որևէ իրավունք հասարակայնորեն լիարժեք մարդ կոչվելու համար և, ուրեմն, հոգեպես ու ներքուստ ավելի եմ աղքատանում:

Ի՜նչ վիրավորական բան է մտերիմների գրքերն այրելը, գիրք այրելը առհասարակ: Եվ հարյուրապատիկ անգամ իրավացի էին բոլոր ժամանակների իմաստուն այրերը, երբ մարդկության մեծագույն հանցանքների թվում դասում էին նաև գիրք

այրելը: Երբ այդ գործի համար ստեղծված հատուկ հաստատությունը՝ հանրածանոթ «Աուտո-դա-ֆեն», որն ըստ սկզբնական մտահղացման պետք է ծառայեր աստվածապարգև հավատը պիղծ գրքերն այրելու միջոցով մաքուր պահելու նպատակին, հենց այդ իսկ պատճառով դարձավ խայտառակության ցուցանիշ մարդկության համար:

... Ձեր լուսավոր ու տաք սենյակներում նստած և կյանքն ըստ ամենայնի վայելող իմ հեռու-հեռավոր բարեկամներ, խնդրում եմ, չայրեք ձեր գրքերը: Եղեք ազատ, համարձակ ու անկաշկանդ գրքերի նկատմամբ, բայց երբեք մի այրեք դրանք, քանզի դա, գոնե իմ կարծիքով, հանցանքներից մեծագույնն է, որովհետև դու միտքն ես այրում, իսկ միտքը մենաշնորհ է, որը տրված է ի վերուստ: Եվ միշտ հիշեք, որ կար մի ողջախոհ այր՝ Սուրեն Շտիկյան-Վանեցի հորջորջմամբ, որ մրմուռ սրտով այրում էր իր գրադարանի գրքերը, բայց ամեն գիրք այրելիս աշխատում էր տնեցիներից թաքցնել արցունքները, հոգեկան տվայտանքներ և սրտի ծակոցներ էր ունենում, բայց չէր կարող չանել այդ բարբարոսությունը, քանզի բնակարանի ջերմաստիճանը ինը աստիճան էր, իսկ տանը 5 տարեկան թոռնիկ ուներ:

Բարի հիշեք մեղավոր Սուրեն Շտիկյան-Վանեցուն և... խղճացեք նրան...

Դեկտեմբերի 31, ուրբաթ, 1993
Տան ջերմաստիճանը՝ 8,5°

«Լսեք դարեր և հեռավոր գալիքի սերունդներ...»

Մեր գրականության դասական Նաիրի Զարյանի հանրահայտ բանաստեղծության առաջին տողն է, որն, իմ կարծիքով, առավել քան հարմար է տարեմուտի իմ այս գրառումների համար:

Դեպի անհայտություն ենք ճանապարհում հայի ու Հայաստանի համար ցավագին ու ողբերգական 1993 թվականը, որը անթիվ-անհամար զրկանքներից, ներքին-կուսակցական գզվռտոցներից, սովահարության դուռը հասած մի ամբողջ ազգի մեռնող ջղաձգումներից, աշխարհի ու պետությունների առջև «հայ» ու «Հայաստան» անունը խայտառակելուց, ազգային պետություն ստեղծելու հարցում կատարյալ ապաշնորհություն ու փանջունիական «հայրենասիրություն» ցուցահանելուց բացի, սերունդներին, դարերին ոչինչ ավելին չկարողացավ թողնել: Մռայլ չկամությամբ ու բթասիրտ անտարբերությամբ դեպի հավերժ ենք ճանապարհում 1993 զարհուրելի թվականը, որը մտավոր-գիտական կատարյալ անկման ու հոգեկան մարազմի հասցրեց Հայաստան աշխարհի մտավորական դասին՝ գրողներին, գիտության գործիչներին, հումանիտար-հասարակական բնագավառի մեծ ու փոքր ներկայացուցիչներին, արվեստի աշխատողներին ու, բնականաբար, նրանց գործն ու գործունեությունը: Ընդունված տերմինով ասած՝ մեր շենշող ու մեծ նկարագիր ունեցող մտավորականությանը, նրանց, ում գրչի ու մտքի արտադրանքով է, որ տվյալ ազգը իր

հասարակական տեղն ու գոյության անկապտելի իրավունքն էր նվաճում աշխարհի մյուս ազգերի շարքում: Անթաքույց թշնամությամբ ճանապարհ ենք դնում ի հավերժություն այս զզվելի 1993 թվականը, որովհետև այն, ի թիվս այլևայլ խեղեշ դրսևորումների, հրապարակ հանեց երկրում տիրող անմարդկային պայմանների բնականոն հետևանքը հանդիսացող ազգային խայտառակության մի նոր, մինչև այժմ չտեսնված ողբերգական մի դրսևորում. հայրենի երկրից զանգվածաբար հեռանալը: Այն, իհարկե, ավել կամ պակաս չափով, շատ կամ քիչ տարողությամբ, այսպես թե այնպես միշտ էլ եղել է բոլոր դարերում և բոլոր ժամանակներում: Բայց նախորդ մեկ-երկու տարիներին և, մանավանդ, այս անցնող 1993 զզվելի թվականին, այն դրսևորվեց չտեսնված-չլսված չափերով: Եթե ասեմ միայն, որ վերջին տարիներին Հայաստան աշխարհից հեռացածների թիվը ոչ պաշտոնական տվյալներով հասնում է մեկ միլիոնի (մեկ մի-լի-ոն), ապա ասելիքս, եթե կարելի է այսպես ասել, ողբերգականորեն կամբողջանա: Մեկ միլիոն հեռացող՝ Հայաստանից, երեք միլիոնանոց Հայաստանից:

Հունվարի 1, շաբաթ, 1994 թ.
Տան ջերմաստիճանը՝ 15,5°

Այո, այո, մի զարմացեք, մեր տան ջերմաստիճանը 15,5° է, որովհետև նոր տարվա կապակցությամբ ամբողջ երկու օր կառավարությունը բարեհաճեց իր ժողովրդին լույս տալ, չնայած... կտրեց ջուրը: Այլևայլ տիպի ջեռուցիչներ միացնելու շնորհիվ

կարողացել ենք փոքր-ինչ փոխել տան ջերմաստիճանը:

2 օր առաջ իմացա, որ Ամերիկա է մեկնել Ստեփան Թոփ-չյանը: Շնորհալի գրականագետ, տեսական թեքումով մի քա-նի աշխատությունների ու բազմաթիվ հոդվածների հեղինակ, և, ի լրումն այս բոլորի, անուրանալի կարողությամբ օժտված նկարիչ: Աշխատանքային կամակորություններ անելու սովո-րություն ուներ, բայց դա չէր խանգարում նրան իր մտավոր գործունեության ճանապարհին, չէր խանգարում ներկայանալի գրականագետ-տեսաբան լինելու նրա գիտական նկարագրին: Այս Ստեփան Թոփչյանն է, ահա, որ մեկնել է Ամերիկա: Պաշտո-նական ձևակերպումն այն է, որ գնացել է մասնակցելու Բոս-տոնում, թե Լոս-Անջելեսում բացված հայ նկարիչների անհա-տական ցուցահանդեսին, որին մասնակցում էր նաև ինքը՝ մի քանի նկարներով: Բայց ես, գոնե, ոչ մի տարակույս չունեմ, որ նա այլևս չի վերադառնա: Ստյոպան էլ գնաց...

Այսօր էլ իմացա, որ գնացել է Արտակ Քալանթարյանը: Արձակագիր Արտաշես Քալանթարյանի որդին, մասնագիտու-թյամբ համակարգչային ծրագրավորող, իր գործի հմուտն ու քաջագիտակը, հաճելի, «համով-հոտով» մի երիտասարդ: Նա էլ...

Գնում ու գնում են մեր հայորդիները դեպի օտար ափեր ու անծանոթ հորիզոններ բախտ փնտրելու, օտարի դռանը հաց մուրալու, արյուն-արցունքով շաղախված մի կտոր կենսական գոյավիճակ ապահովելու համար: Եվ ողբերգականն այն է, որ գնում է մեր հայ ազգի ընտրանին, ազգի սերուցքը, նրա՝ այդ-պիսին ներկայացող ամենաընտիր հատվածը: Իսկ ինչքա՜ն օգ-տակար գործեր կարող էին անել նրանք Մայր Հայրենիքում ու

Հայրենիքի համար, ինչքան կփառավորվեր ազգի անունը աշխարհում ու այլ ազգերի անունների կողքին...

Գնում են ու գնում հայորդիները իրենց բնօրրանից, իրենց հայրենիքից, և ես ոչ մի ակնթարթ չեմ մեղադրում նրանց, քանզի փախչում-հեռանում են երկրային դժոխքից: Հենց այդպիսի զարհուրելի վիճակի մեջ չէ՞ր եղել գերմանացի հանճար Հայնրիխ Հայնեն, բոցաշունչ մի հայրենասեր, որը, սակայն, իր մեջ ուժ էր գտել գրելու դառը-լեղի այս տողերը.

Անեծք և այն հայրենիքին լկտիացած, նենգավոր,

Ուր արատն է կեղծիքի հետ ուժեղանում օրեցօր:

Ուր ծաղիկն է թոշնում անլույս, ճմլած, անուժ ու անկար,

Ուր ոճրածին ճիճուներն են խնդում անզուսպ, անպատկառ...

Հունվարի 6, հինգշաբթի, 1994 թ.
Տան ջերմաստիճանը՝ 13°

Դարձյալ գների թանկացում, և թանկացում հարյուրավոր տոկոսներով: Տրամվայ-տրոլեյբուսների գինը 25 ռուբլուց դարձել է 100 ռուբլի, հացի գինը 70 ռուբլի էր, այժմ՝ 300, լույսի գինը, որ առաջ 8 ռուբլի էր, այս նոր օրենքով դարձել է 40 ռ. (իբր թե լույս կա...)

Եվ սա այն դեպքում, երբ աշխատավարձերի բարձրացման մասին մեր պրեզիդենտի հրամանը, որը պետք է ուժի մեջ մըտ-

ներ հունվարի 1-ից, դեռ չի կիրառվում:

Տնտեսագիտական մեծ գիտելիքներ պետք չեն հասկանալու համար, որ գները թանկացնելու միջոցով երկրի տնտեսությունը փրկելու քաղաքականությունը ծիծաղելի է ու սնանկ, որ դա ոչ մի դարում և ոչ մի պետության մեջ իրեն չի արդարացրել, ավելի ճիշտ՝ արդարացրել է ժամանակի միայն շատ փոքր հատվածի համար: Տնտեսությունը փրկելու միակ ձևը, դրան ըստ ամենայնի զարկ տալն է, դրա անարգել զարգացումը խրախուսելն ու հովանավորելն է, այդ տնտեսությունը նորագույն տեխնիկայով հագեցնելով ու համալրելով, բարձր արտադրողականությունը ապահովելն է: Իսկ դա պիտի անի պետությունը՝ ճիշտ կազմակերպված, մասնագետ-ղեկավարներով համալրված, ամուր ու հաստատուն պետությունը: Իսկ ո՞վ չգիտի, որ այսօրվա դրությամբ ազատ, անկախ Հայաստանը ոչ միայն ուժեղ պետականություն չունի, այլև պետություն ու կառավարություն չունի առհասարակ:

Հունվարի 10, երկուշաբթի, 1994 թ.
Տան ջերմաստիճանը՝ 10°

Ա՜խ իմ այս գարնանաբույր ու վարդաբույր թոռնիկ Հասմիկը...

Ամեն անգամ, երբ ես հոգնած ու գազազած տուն եմ վերադառնում, Հասմիկս ինձ դիմավորում է կանչ-ուրախության ու «պապիկս եկա՜վ»-ի կարկաչուն մի ծիծաղահոսքով: Փարվում-

գգվում է ինձ՝ ջերմորեն ու երկարատև, որին հետևում է ինձ մտրակող հարցը. «Պապիկ այսօր ի՞նչ գիրք ես բերել»: Վկա է Աստված, արցունքներս հազիվ եմ զսպում:

Դե ես ինչպե՞ս պատմեմ քեզ, Հասմիկ ջան, իմ կյանք ու երջանկություն ջան, իմ գոյության միակ իմաստ ջան, այս դժոխային օրերում միակ հենարան ջան, իմ հույս ու հավատ և աստվածատուր մաքրություն ջան, որ այդ բոլորը ես քեզ համար եմ անում: Ախր արյունս Սևանն է սրտիս մեջ, և ես քիչ է մնում գետնին տապալվեմ, երբ լսում եմ քո «...պապիկ թաթիկներս սառ-սառույց են» տրտնջոցը:

Հունվարի 19, չորեքշաբթի, 1993 թ.
Տան ջերմաստիճանը՝ 10,2°

Այսօր շուկա տարանք վաճառելու հորս «Աշխատանքային արիության համար» շքանշանը: Որոշեցինք հորս շքանշանը վաճառել՝ ինչ-ինչ կարիքներ հոգալու համար: Ասում են հնահավաքները դրանց մեծ գումար են տալիս:

Հորս շքանշանը վաճառո՞ւմ ենք...

Աշխույժ ու եռանդուն, հումորով ու կատակասեր մարդ էր հայրս՝ Արշավիր Շտիկյանը: Աշխատող տղամարդու վերաբերյալ ինքնատիպ կարծիք ուներ՝ «Տղամարդու հանգստանալը ո՞րն է: Որ ձեռքերս ծալեմ, նստեմ, կլինի հանգստանա՞լ: Ո՞վ ասաց: Դա կլինի մեռնել: Դրան դեռ կհասնենք»:

Եվ հարցի տեսական հիմնավորումը. «Տղամարդու հանգըս-

տանալն այն է, որ եթե մի գործից հոգնեց, թողնի՝ մյուսն անի, դրանից էլ հոգնեց՝ երրորդն անի և այսպես մինչև անկողին մտնելը: Պարապ նստելը տղամարդու գործ չի, աշխատանքի ոճ չի»:

Այդպես աշխատում էր ինքը, այդ նույն կարգառոճը սովորեցնում էր մեզ՝ ինձ ու քրոջս, նույն կարգառոճը հետևողականորեն հիմնավորել էր այն բոլոր գործարաններում, որոնց տնօրենն էր եղել...

Հունվարի 23, կիրակի, 1994 թ.
Տան ջերմաստիճանը՝ 11°

Երբ նայում եմ իմ այս տանջանքապատման սկիզբը, գոհունակությամբ արձանագրում եմ, որ արդեն երկու ամիս անցել է այս դժոխքից, և ուրեմն, կարծես թե գոյատևեցինք: Մնում է միայն մեկ ամիս, մեկ ամիս, որ անցնի ամեն ինչ, և գարունը բացվի: Իսկ ես 63 տարեկան եմ և իրավունք չունեմ ոչ մի որոպես «հենց այնպես» անցկացնել, գոնե կիսատ գործերս պիտի հասցնեմ վերջացնել: Իսկ օր ու ժամ հաշվելով անցկացրեցի շուրջ երկու ամիս, և դեռ փետրվարն էլ առջևում է, պիտի մի կերպ անցկացնեմ, քանզի աշխատելու ոչ մի հնարավորություն չկա:

Կա միայն մտավոր-հոգեկան կատարյալ անկում:

Այսօր տոնում ենք կնոջս՝ Մելանյայի ծննդյան 61-ամյակը: 61-ամյակ, որից 36-ը իմ կողքին ու ինձ հետ: Ինչե՞ր ենք ապրել իրար հետ...

Հունվարի 26, չորեքշաբթի, 1994 թ.
Տան ջերմաստիճանը՝ 12°

Տան ջերմաստիճանը այդքան է ոչ թե նրա համար, որ ինչ-որ արտակարգ բան է եղել: Պարզապես արդեն մեկ քանի ժամ է, ինչ լույս ունենք, միացրել ենք բոլոր ջերմատու սարքերը և տունը մի քիչ տաք է: Ասեմ նաև, որ դուրսն էլ ցուրտ չի: Կլինի 0°:

Մի քանի օր առաջ նշեցինք ներկայանալի մարդկանցից մեկի՝ Գևորգ Տիրացյանի մահվան տարելիցը:

Հունվարի 30, կիրակի, 1994 թ.
Տան ջերմաստիճանը 11°

Տանը մենակ եմ, և սա իմ կյանքի ամենավատ վիճակն է:

Մի կերպ վառեցի վառարանը, աշխատելով որքան կարելի է քիչ փայտ դնել: Եթե խստագույնս չխնայենք, ապա մինչև փետրվարի կեսը հազիվ բավարարի: Իսկ նոր փայտ գնել չենք կարող, քանզի փայտի մեկ խորանարդ մետրն արժե իմ երեք ամսվա աշխատավարձը:

Վառել եմ մեկ հատ մոմ և... և նստել խոհանոցում, որովհետև քիչ-շատ տաք տեղը խոհանոցն է: Սենյակներում առանց վերարկուի նստելն անկարելի է:

Ասենք, գործ չեմ էլ կարող անել: Մեկ մոմի լույսի տակ կարելի է նստել, անջատել ուղեղը և հենց այնպես գոյատևել. առանց մտքի, առանց որևէ գործի ցանկության, առանց որևէ

մտավոր ճիգի ու լարման: Այսպես եմ ես, այսպես է Հայաստանի ամբողջ մտավորականությունը: Ժամը մոտ 5-ից հետո դու այլևս ոչինչ անել չես կարող, և, ուրեմն, ոչնչի պետք չես, քանզի լույս չկա, տաքություն չկա... Չկա՛:

Սա կոչվում է մտավոր մարազմ: Եվ Հայաստանի մտավորական աշխարհի առնվազն 90 տոկոսը այսպիսի մտավոր մարազմի մեջ է:

Ո՞վ է պատասխան տալու սրա համար:

Եվ սա քաղաքականություն է: Շատ որոշակի մշակված քաղաքականություն, որն արդեն մի քանի տարի կիրառվում է հաստատուն հետևողականությամբ: Սա մի նպատակ ունի՝ ջախջախել հայ մտավորականությունը, այսինքն՝ այն դասը, որով տվյալ ազգը ներկայանում է աշխարհին:

Դուրսն ահավոր մառախուղ է: Մեկ հատիկ մոմս էլ շուտով կայրվի-կվերջանա ու ես կնստեմ խոհանոցում մենակ, մթի մեջ, սոսկ որպես անպետք դիակ, որն ընդամենը շնչում է...

Երբ 1915, 1937, 1948 թվականներին ֆիզիկապես ոչնչացրեցին հայ մտավորականությանը, մինչև այժմ մեծ ու փոքրով աղաղակում ենք դրա մասին՝ եղեռնի, թուրքական վայրագությունների, կոմունիստների գործած հանցագործությունների և այլ ձևով ներկայացվող այդ երևույթի մասին: Նույն եղեռնը, և ավելի խայտառակ ու խարդախ ձևով չի՞ իրականացվում արդյոք հիմա հայ մարդկանց ձեռքով: Նույն և ավելի սարսափելի ձևով չի՞ սպանվում միտքը՝ գործող, ստեղծագործող, արժեքներ ստեղծող միտքը...

Մոմս վառվեց-վերջացավ: Տանը մութ-մութ է:

Փետրվարի 6, կիրակի, 1994 թ.
Տան ջերմաստիճանը՝ 10,6°

Արտասահմանյան բարերարների ուղարկած ձրի նավթը վերջապես հասել է և վաղը առավոտյան ժ. 6-ից Տաթևիկս պետք է գնա հերթ կանգնելու, որից հետո ժ. 9-ին պիտի գնա Մելանյան: Հասկանալի է, որ ես էլ տանը չեմ մնա: Կգնամ հերթի:

Ի՜նչ աշխատանքի գնալ, ի՜նչ գիրք ու հոդված գրել, ի՜նչ մտավոր գործ ու գործունեություն ծավալել, երբ այսօր կա միայն մի կետ-նպատակ, մեկ գերխնդիր, մեկ սևեռուն մտածում. նավթը և այն էլ՝ ձրի:

Նա-ա-ա՜-վթ և... ձը-ը-ը-րի՜...

Փետրվարի 9, չորեքշաբթի, 1994 թ.
Տան ջերմաստիճանը՝ 10,5°

Մի քանի օր առաջ կյանքից հեռացավ Ռուբեն Զարյանը՝ իմ ավագ ընկերն ու բարեկամը, մեր ընտանիքի մտերիմը, անուն ունեցող թատերագետն ու թատրոնի տեսաբանը, հետաքրքիր հուշագիրը: Գրած գրքերից մեծ մասը համապատասխան մակագրություններով, նվիրել է ինձ ու կնոջս, մեր ընտանիքին՝ «Ի հիշատակ», «Ի խորոց սրտի», «Ի հիացումն Շտիկյաններով»:

Այդ գրքերն այսօր չկան: Այրվեցին ձմեռվա ընթացքում: Մնացին միայն մակագրություններ արված էջերը: Այսպես

«հարգեցի» Ձեզ, Ռուբեն Վարոսովիչ...

... Կանգնեցի դագաղի մոտ, երկա՜ր նայեցի այդ խոհական, մտացի դեմքին, ուզեցի ելույթ ունենալ և ասել այն, ինչ գրել եմ վերևում, բայց ելույթ չունեցա և... և կյանքում առաջին անգամ երանի տվեցի հանգուցյալին, երանի տվեցի մահացածին:

Մեռավ-պրծավ այս կյանք- դժոխքից, այս...

Երանի, հազար երանի քեզ, Ռուբեն Վարոսովիչ...

Փետրվարի 14, երկուշաբթի, 1994 թ.
Տան ջերմաստիճանը՝ 10,2°

Այսօր գիշերվա ժամը 3-ից Տաթևիկս գնաց նավթի հերթի՝ այդ անիծյալ ձրի նավթը ստանալու համար և եկավ ժամը 1-ին, այսինքն՝ տաս ժամ հերթ կանգնելուց հետո:

Բացեցի դուռը, որը հաղթական հպարտությամբ ծեծում էր Տաթևս և...

Եվ մի քանի րոպե չկարողացա ճանաչել աղջկաս:

Երանի մեռնեի ու քեզ այդպես չտեսնեի, Տաթևս...

Փետրվարի 16, չորեքշաբթի, 1994 թ.
Տան ջերմաստիճանը՝ 10°

Եթե հաշվենք առավոտյան ժամը 9-ից, ապա 11 ժամ ձյուն է գալիս, մանր, զզվելի ձյուն, որը միայն գալիս է հիշեցնելու, որ փետրվարը մնում է փետրվար, ձյուն, որը միայն տրամադրություն է գցում, ծնում է մռայլ խոհեր ու տխուր-տրտում վարքագիծ, ձյուն, որը, գոնե ինձ, հասցնում է հուսահատության ու գրգռված վիճակի:

Ցուրտ է, մութ է, սնունդը պակաս է և, ի լրումն այս բոլորի, այս զզվելի ձյունը:

... Իսկ ձյան գալուստը երջանկության գագաթնակետն էր ու մեր անափ ուրախության ակունքն ու հիմքը: Ցիծաղով, կանչ ու ուրախությամբ թափվում էինք համալսարանի բակ՝ ուսանողներով ձնագնդի խաղալու...

Փետրվարի 22, երեքշաբթի, 1994 թ.
Տան ջերմաստիճանը՝ 8,8°

Ըստ երևույթին սա արդեն օրինաչափ է, որ քանի դեռ կա այս գարշելի ձմեռն ու կենցաղային-աշխատանքային այս անոնորմալ կարգը, ես առավոտյան պետք է արթնանամ մռայլ ու ջղաձիգ, առիթ փնտրեմ գոռալու, իսկ քանի որ նույն վիճակի մեջ են նաև տնեցիներս, ապա նրանք էլ պետք է նույն ձևով պատասխանեն ինձ...

Ոչ մի լուրջ գործ անել չեմ կարողանում, չնայած անելու բաներ շատ ունեմ: 4-5 ժողովածու (ժողովածու!!!) պատրաստելու պլան ունեմ, երկու գիրք եմ ուզում գրել Ալիշանի մասին, կիսատ է մնացել Ստեփան Ոսկանյանս, ուզում եմ վերահրատարակել Ալիշանի «Նամականին» (հրատարակածս 190 նամակ էր, առ այսօր հավաքել եմ ևս 100-ը), ուզում եմ սկսել Ալիշանի երկերի հինգհատորյակի հրատարակությունը, ուզում եմ... Եվ այս բոլորը, ինչպես ասում են, մտքումս հասունացած գործեր են: Ես պարզապես պետք է նստեմ ու գրեմ:

Իսկ հիմա ես... նստում ու փայտ եմ ջարդում վառարանի համար, գրում եմ իմ այս օրագիրը, միակ, գոնե իմ կարծիքով, շատ պիտանի գործը, հետո պիտի գնամ պատմության ինստիտուտ, քանզի մի քանի կոպեկ փող ունեմ ստանալու հոդված տպելու համար, հետո պետք է արագ հասնեմ տուն, քանի որ Հասմիկ-թոռնիկս մանկապարտեզի փակվելուց հետո տանն է մնում և ես պետք է տանը հետևեմ նրան, մինչև մոր՝ Տաթևիկիս աշխատանքից գալը, այդ ժամանակահատվածում պետք է իրականացնեմ կնոջս խնդրանքը՝ փլավի համար նախատեսված բրինձը ընտրել, որովհետև «ազատը» ես եմ:

...Վատնիր, վատնի՛ր թանկագին ժամանակդ, Սուրեն Շտիկյան...

Մարտի 8, երեքշաբթի, 1994 թ.
Տան ջերմաստիճանը՝ 13,3°

Ի խորոց սրտի խոսք ընդ Աստծոյ

Ոչ, ոչ, ես Գրիգոր Նարեկացին չեմ և ամենևին էլ չեմ անդրադառնալու նրա հանճարեղ «Մատեանին»: Պարզապես վերցրել եմ նրա գլուխների վերնագիրը, քանզի ես էլ, Ֆրիկի խոսքերով ասած, «Հանդէս ունեմ բան մի վեճի» այն անընմբռնելի ու անկառավարելի մեծության հետ, որին դարեր շարունակ «Աստված» են անվանել:

...Հայերն առաջիններից մեկը եղան, ով Տեր, որ ընդունեցին քո Միածին որդու քարոզած ուսմունքը: Ավելին, պաշտամունք դարձրեցին, դարձրեցին անբեկանելի հեղինակություն, այդ պաշտամունքը չափանիշ դարձավ մեր ազգի հոգեկան, մտավոր-աշխարհայացքային բոլոր ոլորտներում, այդ ուսմունք-պաշտամունքը դարձավ մեր ազգի հաց-հանապազօրը...

Մարտի 30, չորեքշաբթի, 1994 թ.
Տան ջերմաստիճանը՝ 17°

Օրերը կարծես սկսում են տաքանալ: Իսկ սա նշանակում է, որ մի զարհուրելի ձմեռ էլ անցկացրեց կործանման դատապարտված մեր ազգը:

Դրսում հանդիպեցի Նանումյան Ռուզաննային՝ բանասիրական գիտությունների թեկնածու, շուրջ 15 անուն աշխա-

տությունների հեղինակ, որոնց մեջ մեկից ավելի են մնայուն արժեք ունեցողները, ավելի մեծ քանակով հոդվածների հեղինակ, որոնցից շատերն արտատպել են արտասահմանի մեր պարբերականները և առհասարակ՝ պատրաստակամ, բարի և իմաստուն տատիկ: Գնում էր իրենց պատգամավորի՝ Հրանուշ Հակոբյանի մոտ:

– Չեմ կարողանում ապրել, Սուրիկ,- ծերացած, փայլը կորցրած աչքերը լցվեցին արցունքով,- իմ թոշակով ու աշխատավարձով միասին կարող եմ հազիվ երկու կիլոգրամ կարագ առնել: Բա մյուս բանե՞րը: Գնում եմ Հրանուշի մոտ դրամ խընդրեմ կամ որևէ ձևով ինչ-որ նպաստ տա ինձ... Դե՝ իմ ուսանողուհին է եղել, երևի ինձ չի մերժի... Ուրիշ ի՞նչ անեմ...

Աչքերը սրբեց, հեռացավ...

Երկա՜ր նայեցի մեր բարի տատիկին, վաստակաշատ գիտնականին, որը հանդարտ, ծերունական քայլվածքով հեռանում էր, և սիրտս ասես փուլ եկավ հուզմունքից, քանզի մտքիս խորքում երևույթը կոչեցի իր իսկական անունով, որից ինքս էլ վատ զգացի՝ մուրացկանություն:

Ապրիլի 7, հինգշաբթի, 1994 թ.
Տան ջերմաստիճանը՝ 18,7°

Շահե սրբազանի հետ խոսակցությունս կարճ ու կոնկրետ եղավ: Ցույց տվեցի Ալիշանի մասին իմ կազմած «Տարեգրությունը», ասացի, որ ցանկանում եմ հրատարակել և հավելեցի,

որ հրատարակչական կազմակերպություններ կան, որոնք դեմ չեն գործս հրատարակելուն, բայց ինձանից 150 դոլար են ուզում:

– Ես 150 դոլար որտեղի՞ց ճարեմ, սրբազան,- խոսակցությունս ավարտեցի ես,- գոնե դրսում հրատարակենք...

Երևի կերպարանքս և արտաքինս շատ էր «խնդրողական», որ սրբազանը միանգամից համակ պատրաստակամություն դարձավ: Դրսում հրատարակելու տարբերակը բացառեց անհապաղ: Ինքն այդքան կապեր ու հնարավորություններ չունի: Բայց այստեղ, ասաց, «Դուն գիրքդ Ակադեմիայի ճանապարհով հասցրու տպարան, 150 դոլարը ես կուտամ»: Հարցը լուծված համարեցի և մի քիչ էլ հավուր պատշաճի խոսելուց հետո, դուրս եկա:

Բայց մռայլ եմ, ներքնապես նվաստացած: Սա էլ իմ մուրացկանությունը չէ՞ր...

Ապրիլի 12, երեքշաբթի, 1994 թ.
Տան ջերմաստիճանը՝ 18,2°

Այսօր հանում ենք վառարանը:

Ապրիլի 14, հինգշաբթի, 1994 թ.
Տան ջերմաստիճանը՝ 18,5°

Հետաքրքիր երևույթ է: Ինչպես արդեն նշեցի, տան ջերմաստիճանը 18,5 է: Բայց ես շարունակում եմ քնել իմ երեք վերմակներով, կնոջս «խավլու» խալաթը հագած և բոլորովին չեմ շոգում: Այսպես քնում էի նաև այն ժամանակ, երբ մեր տան ջերմաստիճանը 9° էր:

Պայծառ, անամպ երկինք է և շուտով դուրս կգա արևը՝ մեր փրկարար, ջերմություն ու կյանք պարգևող արևը: Սա նշանակում է, որ ձմեռն անցկացրեցինք:

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՍՈՒՐԵՆ ՇՏԻԿՅԱՆ-ՎԱՆԵՑԻ

ԴԱՏԱՊԱՐՏՎԱԾԻ ՕՐԱԳԻՐԸ

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. սրբագրումը՝ Վ. Դերձյանի

Չափսը՝ 70x100 $^{1}/_{32}$: Տպ. մամուլը՝ 3,25:
Տպաքանակը՝ 150:

ԵՊՀ հրատարակչություն

ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2016